



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Ս. ՂԵՒՆՂԵԱՆՑ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Այս շաբաթավերջին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Հայրապետական այցելութիւն կը շնորհէ Լոս Անճելըսի շրջանը, հանդիսապետելու եւ կատարելու համար Սրբոց Ղեւնդեանց Նորակառոյց Մայր Տաճարի օծման արարողութիւնը:

Այս առթիւ, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան յատուկ հրաւեր ստացած է մասնակցելու օծման արարողութեան, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 11 Սեպտեմբերին: Առաջնորդ Սրբազան Հօր պիտի ընկերանայ Ազգային Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան: Օծման արարողութեան հրաւիրուած է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ երեց միաբաններէն՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Կիրակի, 12 Սեպտեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ նաեւ Հայրապետական Ս. եւ Ամմահ Պատարագին, որ պիտի մատուցանէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, օծեալ Մայր Տաճարին մէջ:

Իսկ յետմիջօրէին, ի պատիւ Նորին Սրբութեան եւ Մայր Տաճարի օծման առթիւ, պաշտօնական ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Universal Hilton պանդոկին մէջ, որուն ներկայ պիտի ըլլայ նաեւ Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեանի: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Շաբաթ, 11 Սեպտեմբերի առաւօտուն, տեղի պիտի ունենայ Իրանահայ Միութեան Նորակառոյց շէնքի օրհնութեան արարողութիւնը, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Առաջնորդ Սրբազան Հայրը յատուկ հրաւեր ստացած է Իրանահայ Միութեան Կեդրոնական Վարչութեան նախագահէն, ներկայ ըլլալու եւ մասնակցելու նորակառոյց շէնքի օրհնութեան: Սրբազան Հօր պիտի ընկերանայ Արժ. Տ. Կոմիտաս Զեյն. Թրոսեան:

## **PRELATE TO PARTICIPATE IN THE CONSECRATION OF THE DIOCESAN CATHEDRAL**

This weekend H.H. Karekin II, Supreme Patriarch and Catholicos of all Armenians, will begin his Pontifical visit to Los Angeles, during which he will consecrate the newly built St. Leon Cathedral of the Western Diocese.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has received an invitation to participate in the consecration of the Diocesan Cathedral, which will take place on Saturday, September 11<sup>th</sup>, 2010. Very Rev. Fr. Barthev Gulumian will accompany the Prelate. H.E. Archbishop Yeprem Tabakian is also invited to participate in the ceremony.

On Sunday, September 12<sup>th</sup>, the Prelate will participate in the Pontifical Divine Liturgy at the Cathedral. In the afternoon, the Prelate will attend the celebratory gala banquet at the Universal Hilton. He will be accompanied by H.E. Archbishop Yeprem Tabakian and Very Rev. Fr. Barthev Gulumian.

On Saturday morning, H.H. Karekin II will bless the newly built center of the Armenian Society of Los Angeles. The Prelate has been invited to attend this ceremony as well, and will be accompanied by Rev. Fr. Gomidas Torossian.

\*\*\*

### **ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի ՉՈՐՏԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Ինչպես ծանօթ է բոլորին, այս Շաբաթ, 11 Սեպտեմբերին կ'ամբողջանայ Թրդ տարեկիցը այն ահաւոր ահաբեկչական դէպքին, որ պատահեցաւ Նիւ Եորքի առեւտրական երկու շէնքերու փլուզումով, եւ Փենթակոնի ու Փենսիլվանիոյ վրայ յարձակումներով, 11 Սեպտեմբեր 2001-ին, որուն զոհ գացին հազարաւոր անմեղ քաղաքացիներ:

Արդ, նկատի ունենալով, որ յառաջիկայ Կիրակի, 12 Սեպտեմբերին Վերացման Ս. Խաչի օրն է, մեր եկեղեցւոյ տաղաւար տօներէն մին, առ այդ՝ կարելի չէ հոգեհանգիստ կատարել, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս Ս. Պատարագի, Տեր Ողորմեայի յատուկ աղօթք պիտի բարձրացուի արկածի անմեղ զոհերու հոգիներուն ի յիշատակ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլայ Ս. եւ անմահ Պատարագին եւ աղօթակից ըլլայ զոհերուն յիշատակին:

## PRAYERS TO BE OFFERED ON THE 9<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE 9/11 ATTACKS

On Saturday, September 11<sup>th</sup>, 2010, we will commemorate the 9<sup>th</sup> anniversary of the terrorist attacks on the World Trade Centers, the Pentagon, and in Pennsylvania.

Given that Sunday, September 12<sup>th</sup> is the Feast of the Exaltation of the Holy Cross and as requiem service does not take place on major feast days, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has arranged for *Der Voghormia* prayers to be offered during Divine Liturgy in all Prelacy Churches in memory of the nearly 3,000 victims.

\*\*\*

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ ԱՅՑԵԼԵՑ ԹԵՄԻՍ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ



Անցեալ շաբթուան ընթացքին, կարգ մը Ազգային վարժարաններ վերաբացին իրենց դռները եւ ուսումնական 2010-2011 տարեշրջանը սկիզբ առաւ՝ համաձայն վերամուտի մեր աւանդութեանց:

Աղօթքի պահը առաջնորդեցին մեր հոգեւոր հայրերն ու եկեղեցիներու հոգեւոր հովիւները, եւ ընթերցեցին

Առաջնորդ Սրբազան Հօր յատուկ պատգամը, վերամուտի առիթով, յղուած դպրոցներուն:

Հայկական մեր կրթական օճախներէն՝ Ռոզ եւ Ալէք Փիլիպոս, Մեսրոպեան, Վահան եւ Անուշ Շամլեան Ազգային վարժարանները Երեքշաբթի, 7 Սեպտեմբերի առաւօտուն պաշտօնապէս վերաբացին իրենց դռները, սկսելու համար ուսումնական իրենց աշխատանքները:

Վերամուտի առթիւ, Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց Սոնթեպելլոյի Մեսրոպեան Ազգային վարժարանը, մասնակից եղաւ վերամուտի արարողութեան, իր օրհնութիւնները բաշխելով աշակերտութեան, դաստիարակներուն ու վարժարանի մեծ ընտանիքին:

Ան յատկապէս ողջունեց վարժարանի նոր տնօրէնը՝ Իրաւ. Սեդո Պոյաճեանը, ապա նաեւ վեր առաւ Հայ Դպրոցին տեղն ու դերը մեր նոր սերունդներուն կազմաւորման գործին մէջ:

Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներ՝ Արժ. Տ. Նարեկ Աւ. Զինյ. ՓԷիլիվաեան, Արժ. Տ. Աշոտ

Քինյ. Գամպուրեան, հոգաբարձութեան, շրջանի միութեանց ու կազմակերպութեանց անդամներ, ինչպէս նաեւ Ազգ. Վարժարաններու կրթական համակարգի ներկայացուցիչներ ու մեծ թիւով ծնողներ:



Բարի գալուստի խօսք արտասանեց Ազգային Վարչութեան ատենադպիր Էլ օրուան հանդիսավար Իրաւ. Լեւոն Կիրակոսեան: Խօսք առին վարժարանի նոր տնօրէն՝ Իրաւ. Սեդո Պոյաճեան Էլ ներկայացուցչական դէմքեր:

Վերամուտի առթիւ, Առաջնորդ Սրբազան Զայրը նաեւ օրհնեց յիշատակը Մեսրոպեան Ազգային Վարժարանի հիմնադիրներուն:

Ուրբաթ, 10 Սեպտեմբերի առաւօտուն, Առաջնորդ Սրբազանը այցելեց Փասատինայի Լեւոն Էլ Յասմիկ Թաւեան Ազգային Մանկամուր-Մանկապարտէզը:

Առաջնորդ Սրբազան Զօր կ'ընկերանար Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քինյ. Պապօշեան: Ներկայ էին նաեւ Ազգային Վարչութեան ատենադպիր Իրաւ. Լեւոն Կիրակոսեան Էլ Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմնի անդամ Օր. Շարլոթ Սասունեան: Առաջնորդ Սրբազան Զայրը օրհնեց վարժարանի աշակերտներն ու անձնակազմը Էլ յաջող տարի մը մաղթեց բոլորին:

Վարժարանի շրջափակին մէջ հաւաք մը տեղի ունեցաւ, ներկայութեամբ աշակերտներուն Էլ ծնողներուն: Իրագործուեցաւ կոկիկ յայտագիր մը: Բարի գալուստի խօսք արտասանեց վարժարանի տեսչուհին՝ Տիկ. Զելէն Մանուչարեան: Ողջոյնի խօսք փոխանցեց Առաջնորդ Սրբազանը: Զաւաքը իր աւարտին հասաւ յիշատակի խմբանկարով:

## **PRELATE VISITS PRELACY SCHOOLS AT THE START OF THE NEW ACADEMIC YEAR**

Last week, many of our Prelacy Schools commenced the new academic year with traditional prayers led by our pastors and the reading of the Prelate's back to school message.

On Tuesday, September 7<sup>th</sup>, 2010, Rose and Alex Pilibos, Armenian Mesrobian, and Vahan and Anoush Chamlian Schools commenced the new school year.

On Tuesday, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited Armenian Mesrobian School to preside over the opening ceremony, during which he conveyed his blessings and well wishes to the students and administration, and welcomed new principal Mr. Seto Boyajian, Esq. Pastors of Holy Cross Cathedral Archpriest Fr. Nareg Pehlivanian, Rev. Fr. Ashod Kambourian, Board of Trustees, and representatives of sister organizations

attended the ceremony. Welcoming remarks were delivered by Executive Council member and Master of Ceremonies Mr. Levon Kirakosian, Esq. Remarks were also delivered by Mr. Seto Boyajian, and community representatives. On this occasion, the Prelate also blessed the memory of the school's founders.



On Friday, September 10<sup>th</sup>, the Prelate visited Levon and Hasmig Tavlian Pre-School where he blessed the students and wished them a successful school year. He was accompanied by Pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Babochian. Executive Council member Mr. Levon Kirakosian and Board of Regents member Ms.

Charlotte Sassounian also participated in the ceremony.

A program by the students followed in the school courtyard. Welcoming remarks were delivered by the school director Mrs. Helen Manoucherian. The Prelate conveyed his message to the students and administration.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԿԱՐՕ ԿԱՐՈՅԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Չորեքշաբթի, 8  
Սեպտեմբերի յետմիջօրէին,  
Ազգային Առաջնորդարան  
այցելեցին Ֆրանսահայ  
գեղանկարիչ Տիար Կարօ  
Կարոյեան եւ իր տիկինը՝  
Սթելլա Կարոյեան, որոնք  
ընդունուեցան Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեանի կողմէ:

Ստերմիկ  
հանդիպումի ընթացքին,  
գեղանկարիչ արուեստագետը Առաջնորդ Սրբազան Զօր փոխանցեց, թէ  
անցնող Փետրուարին այցելած էր նաեւ Լիբանան եւ հանդիպում մը  
ունեցած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.

Կաթողիկոսին հետ, եւ Նորին Սրբութեան նուիրած՝ Վերջին Ընթրիքի իր գեղանկարը:



Այս այցելութեամբ, արուեստագետ Տիար Կարոյեան, Ազգային Առաջնորդարանին նուիրեց իր ստեղծագործութեան արդիւնքը եղող Յիսուսի կատարած Տաճարի մաքրագործման պաստառը: Արուեստագետին իսկ բացատրութեամբ, պաստառին վրայ կ'երեւին երկու սիւներ, որոնք կը խորհրդանշեն Քրիստոնեական կրօնի

երկու սիւները՝ Սէր եւ Հաւատք, եւ որոնք մարդու հոգիին մէջ կանգնուած են Աստուծոյ կողմէ: Սակայն մարդը իր հոգին յանձնած ըլլալով աշխարհիկ ու մեղաւոր կեանքին՝ աղարտած է Աստուածապարգել իր կեանքը: Ահա թէ ինչո՞ւ նկարին մէջ Յիսուս կը ներկայանայ ցաւատանջ աչքերով ի դէմս մարդու աղարտած հոգիին եւ նիւթին ու աշխարհին դարձած անոր գերութեան. այդ ինչուն Յիսուսի ձախ ձեռքին մէջ արտայայտութիւն գտած է: Իսկ Յիսուսի այդ ձեռքի պարանը կը խորհրդանշէ Աստուծոյ եւ մարդուն միջեւ եղող կեանքի կապը, որ մարդու մեղքին պատճառով կտրուած է: Յիսուսի ետին գտնուող չորս աստիճանները կը խորհրդանշեն չորս Աւետարանները:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց Տիար Կարօ Կարոյեանին, իր բերած թանկագին նուէրին համար, ու իր կարգին, Սրբազան Հայրը՝ յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն:

## PRELATE WELCOMES ARTIST GARO GAROIAN

On Wednesday, September 8<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy French-Armenian artist Mr. Garo Garoian and his wife Stella, who are in Los Angeles on a brief visit.

Mr. Garoian informed the Prelate that in February of this year he visited Lebanon where he met with H.H. Catholicos Aram I and presented him with a painting of the Last Supper. During their visit on Wednesday, Mr. Garoian presented the Prelate with a painting of Jesus cleansing the temple.

The Prelate thanked Mr. Garoian for the painting and presented him with a memento.

\*\*\*

